Սպարտակ Սարատիկյան, *պեխ. գ. թ., դոցենտ*

ԲՈՒՀԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթության, այդ թվում ուսուցման որակի գնահատման, համակարգը դեռևս կայացած չէ: Մենք ունենք խորհրդային ավանդույթների և ժամանակակից արևմտյան /բոլոնյան/ համակարգի առանձին բաղադրիչների մեխանիկական միացում կամ կրթական կոնգլոմերատ: Այն մի կողմից պահպանում է ուսումնական գործընթացում որոշակի վարչարարական միջամտությունների հնարավորությունը, մյուս կողմից բազմակիորեն հեշտացնում է ձևական կրթության ստացումը /դիպլոմի ձեռքբերումը/: Չնայած, կրթության մասին պետական հայեցակարգի և համապատասխան օրենքի առկայությանը, այնուամենայնիվ, բացակայում են կրթության գնահատման իրական, գործուն չափանիշները: Այսպես, հաճախ որպես կրթության որակի գնահատման չափանիշ ներկայացվում են սահմանված կրթական չափորոշիչները, ԲՈՒՀ-ի կադրային ներուժի, առկա գիտատեխնիկական հնարավորությունների օգտագործման արդյունավետությունը, առաջադիմության գնահատման պաշտոնապես սահմանված ձևաչափերը /միջանկյալ քննություններ, ստուգարք, անհատական աշխատանք, ընթացիկ ակտիվություն/, կամ շուկան ներկայացնող գործատուների պահանջները /որոնք ոչ միշտ են բխում տվյալ մասնագետի պրոֆեսիոնալ գործառույթներից/: Թվարկվածները, մեր կարծիքով, ոչ թե կրթության որակի չափանիշներ են, այլ կրթության որակի գործոններ, որոնք ձևավորում, ապահովում կամ խթանում են այդ որակը: Արդյունքում մասնագիտական կրթությունը դառնում է համապատասխանաբար՝ կամ ինքնանպատակ, կամ՝ ձևական կամ էլ՝ ընդամենը շուկայի կցորդ: Մեր կարծիքով, բուհական կրթության իրական որակը գնահատելու համար պետք է, նախևառաջ, հստակեցնել կրթության որակ հասկացությունը՝ առաջնորդվելով որակի բնագավառում հասկացությունների՝ ԻՍՕ ստանդարտացման միջազգային հեղինակավոր կազմակերպության կողմից առաջարկվող մեկնաբանություններով:

Երկրորդ. ուսուցումը պետք է դիտել որպես ծառայություն, բուհը՝ ծառայություն մատուցող, իսկ ուսանողին՝ որպես սպառող:

Երրորդ. որպես ուսուցման որակի գնահատման կարևորագույն չափանիշ պետք է ընդունել ուսանողի բավարարվածությունը:

Այս դեպքում, ԻՍՕ-ի վերջին վարկածին համահունչ, կրթության որակը կարելի է սահմանել որպես ***պահանջներին առկա կրթական բնութագրերի համապատասխանության աստիճան,*** *իսկ*

Կրթության որակի գնահատման գլխավոր չափանիշը՝ ուսանողների բավարարվածություն: *Վերջինս, դարձյալ ըստ ԻՍՕ-ի, կարելի է սահմանել որպես* ***ուսանողների կողմից սեփական պահանջների կատարման ընկալման աստիճան:*** Կրթության որակի վերաբերյալ ուսանողի սեփական կարծիքը կամ բավարարվածության աստիճանը կարելի է որոշել սոցիոլոգիական հարցման տարբեր՝ ուղղակի և անուղղակի մեթոդներով, որոնք լուսաբանված են մասնագիտական գրականության մեջ և մասամբ կիրառվում են նաև բուհական համակարգում: Նպատակահարմար է թվում ուսանողի բավարարվածության աստիճանի որոշման մեջ, այսպես կոչվող, «ինքնագնահատման» /ռուսերեն՝ самооценка, անգլերեն՝ self-assessment/ մեթոդի կիրառումը, երբ կազմակերպությունը որոշակի չափանիշներով գնահատում է շահագրգիռ կողմերի պահանջների կամ սպասելիքների կատարման աստիճանը: Այս մեթոդը լայնորեն կիրառվում է որակի կառավարման համաշխարհային պրակտիկայում, հատկապես, որակի գծով ազգային, միջազգային մրցանակների շնորհման ժամանակ: Ինքնագնահատման արդյունքները հաջողությամբ կարող են կիրառվել նաև բուհի գործունեության, այդ թվում՝ դասախոսի աշխատանքի գնահատման և վերանայման նպատակներով /«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում՝ օգտագործված է «ինքնավերլուծություն բառեզրը»/: Ուսուցման որակի գնահատման մեջ այս մեթոդի արդյունավետությունը և արդյունքների հավաստիությունը երաշխավորվում է շնորհիվ երկու կարևոր հանգամանքի՝ առաջին. հարցման արդյունքները կամ գնահատականները առաջադիմության պաշտոնապես հաստատված ձևաչափերում չեն ներառվում, և երկրորդ՝ հարցումն անցկացվում է անանուն կամ ծածկագրված: Կարծում ենք, ուսանողի ինքնագնահատման միջոցով պետք է վեր հանել, ի թիվս այլոց, երկու կարևոր հարցադրման պատասխաններ.

- սեփական պահանջների, սպասելիքների կատարման կամ բավարարվածության աստիճանը,
- չբավարարվածության կամ մասնակի բավարարվածության պատճառները, այդ թվում՝ նաև բուն ուսանողի անձով պայմանավորված:

Բնականաբար, ինքնագնահատման մեթոդի արդյունավետ կիրառումը ենթադրում է կազմակերպական, մեթոդական, տեխնիկական բնույթի լուրջ աշխատանքների իրականացում, ինչը սակայն կփոխհատուցվի ստացվող արդյունքների գիտա-գործնական նշանակությամբ:

Մեր կողմից անցկացվել է ուսանողի ինքնագնահատման պարզունակ փորձ, յուրատեսակ ճեպընթաց հարցում՝ Մարքեթինգ մասնագիտության 1-ին կուրսում «Ապրանքագիտության հիմունքներ» առարկայի յուրացման որակի վերաբերյալ: Առաջին պարապմունքին ուսանողներին առաջարկվել է գրավոր ձևով համառոտ ներկայացնել ապրանքագիտության հիմնական հասկացությունները /ապրանք, պահանջմունք, ապրանքների սպառողական արժեք, որակ, դասակարգում, տեսականի, ապրանքային կոդ, ստանդարտ, սերտիֆիկատ, մրցունակություն/ իրենց պատկերացմամբ: Լրացված պատասխանները՝ որպես սկզբնական արդյունքներ, հավաքվել և պահվել են մինչև դասընթացի ավարտը: Վերջին պարապմունքին դարձյալ նույն սցենարով կրկնական հարցման միջոցով ստացվել են վերջնական արդյունքները: Այնուհետև ուսանողներին վերադարձվել են սկզբնական արդյունքները և առաջարկվել գնահատել երկու պատասխանները /0-անբավարար, 1-բավարար, 2-լավ, 3-գերազանց սանդղակով/, դրանք համեմատելով տրամադրված ճիշտ պատասխանի հետ: Տվյալների համապատասխան մշակման և ամփոփման հիման վրա ուսանողը գնահատել է նշված հասկացություններից յուրաքանչյուրի և ընդհանուրի գծով իր նախադասընթացային, հետդասընթացային գիտելիքները, ինչպես նաև իմացության աճի դինամիկան կամ նյութի յուրացման աստիճանը:

Ինքնագնահատման տվյալները մեր կողմից մշակվել և օգտագործվել են դասավանդման որակը գնահատելու և բարելավելու նպատակով: Մասնավորապես, պարզվել է, որ ապրանքի «սպառողական արժեք», «որակ», «մրցունակություն» հասկացությունները ուսանողները համեմատաբար ավելի դժվար են յուրացնում, քան «տեսականի», «ապրանքային կոդ», «ստանդարտ», «սերտիֆիկատ» հասկացությունները, ինչը հաշվի ենք առել նշված առարկայի ուսումնական ծրագրով նախատեսված ժամաքանակների վերաբաշխման ժամանակ:

АННОТАЦИЯ

Спартак Саратикян, *канд. тех. наук*

О ОЦЕНКЕ КАЧЕСТВА ВУЗОВСКОГО ОБУЧЕНИЯ

При оценке качества вузовского образования, в.т.ч. обучения, автор рекомендует руководствоваться прежде всего определениями ИСО основных понятий в области качества. Сделана попытка переформулировать эти понятия применительно к образованию. Предлагается в процессе оценки качества обучения часто использовать метод самооценки, а среди критериев, основным считать удовлетворенность студентов. Представлен также простейший пример экспрес-метода самооценки, проведенного автором.

ANNOTATION

Spartak Saratikyan

ABOUT EVALUATION OF HIGHER EDUCATION QUALITY

In assessing the quality of higher education, incl training, the author recommends the primarily definitions ISO of basic concepts in the field of quality. An attempt was made to reformulate these concepts in relation to education. It is proposed to assess the quality of training often to use the self-assessment method, and among the basic criteria considered student satisfaction. Also presented a simple example of express-method of self-assessment conducted by the author.